կանգնած ուտում են թռի տերևները։ Նույն իսկ քրիստոնեական արվեստի մեջ նրանք ավելի հաճախ դեկորատիվ բնույթ ունին և վոչ խորհրդավոր, սիմվոլիկ. այսպես և հատկապես ԺԴ. և հետագա դարերի մանրանկարչության մեջ, վոր յուր նմանություններն ունի նաև մեր հարևան ազգերի արվեստի մեջ։ Եջմիածնի մասանց խորանում գտնվում և վոսկերչական մի գեղեցիկ գործի մնացորդ, հավանորեն մասանց պահարանի մի յերես, կեդրոնում մի հարթ խաչ, ծածկված բուսական զարդարանքով. տախտակի մնացած մակերևույթն ել ամբողջապես զարդարված թռիներով, նրանց ցողուններով և ծաղիկներով. խաչի անկյուններում



Մասանց պահարանի յերես. Պատկեր 88.

փոխեփոխ մի մի վագրի, յեղջերուի և նրանց ձագերի պատկերներ, պարսկական արվեստին հատուկ ոձերով (պատկ. 88)։ Պետք է յենթադրել, վոր այս ամբողջությունը խորհրդավոր մի իմաստ ունի խաչի հետ զուգորդված, բայց վոչ համապատասխան Յեսայի ԺԱ. 6 բովանդակության։ Զլիներ պատվանդանով ձեռակերպված խաչը, նրան քրիստոնեական-հայկական ծագում ել չեյինք վերագրիլ, այնքան մոտ է նա արևելյան մահմեդական ազգերի արվեստներին։ Այդ կողմից մեծ աղերս են ցուցադրում հատկապես արևելյան Հայաստանում գրված ձեռագիրները. բազմաթիվ որինակներից հիշենք միայն հենց Պռոշյանների հոգևոր կեդրոններից մեկի՝ Աղջոց ս. Ստեփաննոսի Դալուստ գրչի ձաշոցը 1442 թվից կամ Հովհաննես Խիզանցու նկարազարդած բազմաթիվ ձեռագիրների լուսանցքի զարդերը ԺԴ. դարի վերջում և ԺԵ.-ի առաջին քառորդում ծաղկած *։ Այսպես ուրեմն վոսկերչական արվեստի մեջ ևս նույն աղերսն ենք նկատում կենդանական և բուսական զարդարանքների նկատմամբ դեպի արևելյան ազգերի արվեստը, ինչպես և պատկերագրական արվեստի մեջ դեպի Ասորիքն ու Բյուզանդիան։

Միքայել հրեշտակապետ, դռնակի վրա ճեռսից. Պատկեր 89.

Շարունակենք մեր պահարանի վերլուծությունը։

Շատ գեղեցիկ են բացված դռնակների հրեշտակապետները՝ աջից Գաբրիել և ձախից Միքայել (պատկ. 89), յերկուսն ել իրար նման հագուստով և դիրքով, միայն համեմատ իրենց տեղերի. իրար նման են նաև դռնակների մակերևույթի և շրջանակների զարդերով։ Հրեշտակները կանգնած են խաչի կողքերից, գլուխները դեպի սրբությունը խոնարհած, թևերից մեկը վեր և մյուսը ներքև փռած. յերկու ձեռքով բռնել են խաչագլուխ գավազան, խաչի կոթը և գավազանը ներքևում խնձորներով։ Ներքնազգեստը իջնում է մինչև հողաթափներ հագած վոտները, իսկ ուսերի վերա ձգված կրկնոցը, կոճկված ձախ ուսին խաչաղարդ ճարմանդով, գեղեցիկ ծալքերով իջնում է ծնկներից ցած։ Ներքնազգեստի պարանոցը զարդարուն է, ինչպես և սեղմված բազպանները։ Դեմքերը մեծարանքի արտահայտությամբ. պարանոցների վերա իջնում են վոլորուն խոպոպիքները։ Ականջները ծածկված են մազերով և լսելիքի ժապավենները փողփոդում են հետևից, ճակատներին յերևում է յեռանկյունի

* Ձեռ. Էջմ. № 754. Ն. Ց. 135ա։ № 984, 56բ. Ն. Ց.